

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ

ԳԱՀԻՐԷ, Ապախ փողոց

ՄՈՒԿԱԹԱՄԻ ԸԻՅՏ ՊԻՄԱԳ

Pour les annonces s'adresser
à la Rédaction du Journal PHAROS

LE CAIRE — RUE ABDIN

vis-à-vis du «Mokattam»

ԾԱՆՈՒՅՈՒՄՆԵՐ Կ'ԸՆԴՈՒՆՈՒՆ

ՄԷԿ անգամի համար տողը 3 ՂՐԶ. ողջ:
ՄԷԿ անգամե աւելի ծանուցումներու համար
մասնաւոր պայմաններ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՊԻՏՈՒՄԻ ԶԱՐԲ

Տարեկան ՂՐԶ. 100

Վեցամսեայ » 33

Եռամսեայ » 30

ՕՏԻՐ ԵՊԻՏՈՒՄԻ ԶԱՐԲ

Տարեկան ՊՐ. 26

Վեցամսեայ » 14

ԵՏ ԶԻ ՏՐՈՒԻՐ

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՈՒՂՂՈՒՄ

ՈՒՆԻ ԳՐՈՒԹԻՒՆ



ՓԱՐՈՍ

ԼՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԵՎԱՆԻ, ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ՇԱՐԱԲ ՕՐԵՐԸ

Տնօրէն-Խմբագիր Յ. ԱԼՓԻՍԻ

ԱԶԳԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ԱՂԵՐՍ. ԹԱՂ. ԽՈՐՀՈՒՐԴԸ

(Շարունակութիւն Տրդ. Թիւ 15),

Կարգը եկած է զբաղելու մեր եր-
րորդ հարցումով:

«Այս թաղական խորհուրդը 1899
ապրիլին ընտրուած խորհուրդն է,
թէ տարբեր մարմին մը»:

Հոս հարկ է կրկնել թէ պաշտպան
կողմը կը յայտարարէ որ հիմակուան
թաղական խորհուրդը 1899 ապրիլի
խորհուրդն է, միայն թէ այն տար-
ւոյ զեկտեմբերին մասնակի նորոգու-
թիւն մը կրած է, հրաժարեալներուն
տեղ երկու օժանդակ անդամ առնուե-
լով. և այս համաձայն է Սահմա-
նադրութեան: Միւս կողմը կը պնդէ
թէ ապրիլի թաղական խորհուրդը
զեկտեմբերին լուծուած է և այժմեան
թաղական խորհուրդն ամբողջու-
թեամբ Ն. Վ. Պօղոս փաշայի կողմէ
կազմուած է, և այս հակառակ է
Սահմանադրութեան:

Կը զարմանանք որ երկու կողմն
ալ թէ և Սահմանադրութեան անու-
նով կը փաստաբանեն, բայց իրենց-
մէ ոչ ոք յանձն կ'առնէ Սահմանա-
դրութիւնը և անկէ բխող հրահանգ-
ներն ուսումնասիրել, անոնց այս կամ
այն յօդուածը յենակէտ ընելու համար
իրենց առարկութեանց և փաստերուն:
Սակայն միայն այս կերպով է որ
ընթերցողին ալ առիթ կ'ընծայուի,
անձամբ քննելու և գտնելու վէճի
առարկայ խնդիրներն: Սիրայօժար
ուրեմն կը վերաբանանք վերոյիշեալ
տետրակներն և բուն իսկ Սահմա-
նադրութեան ՅՏԸ. երեսին վրայ հե-
տեւալը կը գտնենք:

Յօդ. 36. — «Թաղական խորհրդոց
պարտականութիւնն ու ընթացքը սահ-
մանելու համար պէտք եղած կանո-
նադրութիւնը կրօնական և քաղա-
քական ժողովներուն ձեռքը պիտի
չինուին»: Եւն.:

Այստեղ ալ կ'անհնադրութեան
յուզեալ խնդրոյն հետ կ'ապ ունեցող
յօդուածները:

Յօդ. 42. — «Երբ սահմանեալ ժա-
մանակէ յառաջ թաղական խորհրդ-
ականութեան հրաժարելոց թիւն և

ընթի հասնի, թաղական խորհուրդը
պարտաւոր է ծանուցանել ազգային
վարչութեան, որ յետ քննելոյ պատ-
ճառը, եթէ կայ, անոնց տեղ նորոգ
ընտրութեան հրահանգը կուտայ»:

Յօդ. 43. — «Եթէ թաղական խոր-
հուրդ մը սահմանեալ ժամանակէն
յառաջ հրաժարի, պարտական է իր
հաշիւներն ալ ի միասին իր համա-
րառու վարչութեան ներկայացնել,
որ անմիջապէս նոր ընտրութեան
հրահանգ կուտայ»:

Օրինակն այս տրամադրութիւն-
ներն ընթերցողին աչքին առջև դնե-
լէ յետոյ՝ հարկ կ'այ միթէ զիտել
տալ որ ապրիլին ընտրուած թաղա-
կան խորհուրդն եթէ մինչև անգամ
մասնակի նորոգութիւն մը ունեցած
ըլլայ զեկտեմբերին, այդ նորոգու-
թիւնն ալ կատարուած չէ օրինակն
տրամադրութեանց համաձայն կերպով
վասնզի զլրաւորաբար՝

1. Աթոռնին ձգողներուն հրաժար-
ման պատճառները վարչութեան ու
չաղրութեան յանձնուած չեն և անոնց
յաջորդներ կարգելու պէտքը վար-
չութեան հաստատուած չէ:

2. Երբ հրաժարողներու յաջորդ-
ներու համար ընտրութիւն կատար-
ուած չէ, այլ վրեժ. Ատենապետ փա-
շային հետ մնացեալ պաշտօնակից-
ներուն կողմէ երկու նոր անդամ ան-
ուանուած են, թէ և իրաւ է որ նոր
անուանուածները մեծ արժանիքի և
զիրքի տէր անձնաւորութիւններ էին,
բայց յանուն անկողմնակալութեան
և անկեղծութեան պէտք է խոստու-
վանիլ թէ ոչ Ն. Վսեմութիւնը և ոչ
ալ իր Աղն. պաշտօնակիցները՝ ըստ
օրինի իրաւունք չունէին այդ ան-
ուանումները կատարելու. եթէ մինչև
անգամ ի Պոլիս, շատ հազուադէպ
պարագաներու մէջ, թաղական
խորհուրդներու հրաժարող անդամոց
յաջորդները մնացեալ անդամներու
կողմէ անուանուած են, Պատրի-
արքարանի գիտութեամբն և հա-
ւանութեամբ, ոչ ապաքէն այդ կեր-
պով իրենք՝ ամբողջ թուրքիոյ և Ե-
գիպտոսի Հայոց բոլոր ազգային պաշ-
տօնական մարմիններուն վրայ իրա-
ւասութիւն ունեցող պատրիարքարա-
նի զիւրքն և իշխանութիւնը զրուած
կ'ըլլային պահ մը, մասնաւոր որ Ա-

ղեքսանդրիա այն ատեն յուզման մէջ
չըլլալով, կարելի էր իրենցմէ պակ-
սածներուն տեղ ժողովուրդին նոր
ընտրութիւն կատարել տալ (հրահանգ
Յօդ 44):

Գնեք այժմ, քննելու միւս կողմի
յայտարարութիւնը թէ հիմակուան
թաղական խորհուրդը 1899 ղեկ-
տեմբերին կազմուած է վսեմ. Պօղոս
փաշայէ, նոյն տարւոյ ապրիլին ընտ-
րուածը արդէն հրաժարած և լուծ-
ուած ըլլալով ամբողջովին:

Թէ և մեր աչքին առջև ունինք շատ
մը հօգի փաստեր այս յայտարարու-
թեան ճշմարտութիւնը հաստատող,
բայց մենք զանց կ'ընենք փաստերը
տեղի տալու համար ապացոյցներուն:

1. Ընդդիմադիր կուսակցութիւնը
կը յայտարարէ թէ թաղական խոր-
հուրդը լուծուած ըլլալու պարագան
ատենագրութեամբ մը հաստատուած
է հրաժարեալ թաղական խորհուր-
դին անդամներէն և պահանջած է
այդ ատենագրութեան հրատարակու-
թիւնը:

Այդ ատենագրութիւնն, որ մեծ
կշիռ ունի բացուած վէճին մէջ, հրա-
տարակութեան չտրուեցաւ պաշտպան
կողմէն, ինչ որ բնական է թէ անոր
պարունակութիւնն իրեն նպաստաւոր
չէ՝ վասնզի պաշտպան կողմը չկըր-
նար առարկել թէ այդ ատենագրու-
թեան չհրատարակուելուն պատճառն
իրեն չտրամադրուիլն է, քանի որ
ուրիշ պաշտօնագրեր, ներկայ վէճին
պատկանող, իր տրամադրութեան
տակ զրուեցան և հրատարակուեցան:

Երկրորդ պարագան բոլորովին
վճռական, բոլորովին անվիճելի է:
Այս լախնախիչ ապացոյցն է
վսեմ. Փոխ-Ատենապետ՝ Կարապետ
Պէյ Ռէիզեանի՝ Աղեքսանդրիոյ Աղ-
քատախնամ ընկերութեան նախորդ
Գործադիր ժողովոյ Պ. Ատենապետին
պաշտօնապէս ուղղած նամակին սա
հատուածը:

«Տեղւոյ» հայ հասարակութեան
մշտական ատենապետ վսեմ. Պօղոս
փաշայի կողմէ կարգուած թաղական
խորհուրդս լիազօր իրաւունք կը վա-
յիլէ նորին վսեմութեան կողմէ ինք-
զինքը յարգելի ընծայելու համար և
իր տաժամանակիայ հանգամանքը որ-
եւէ կերպով արգելք չի հանդիսանար
հանրային գործերը զօրաւոր ձեռքով
մը վարելու»:

Երբեք պաշտօնագիր մը եղած չէ
ասկէ աւելի պայծառ, աւելի բացո-
րոշ: Պաշտպան կողմէն այս պաշտո-
նագրի գոյութիւնը ոչ միայն չի հեր-
քուիր, այլ և կը հաստատուի. հե-
տեւաբար անվիճելի է թէ հիմակ-
ուան թաղական խորհուրդը, իր իսկ
պաշտօնական յայտարարութեան հա-
մեմատ Ն. Վ. Պօղոս փաշայէ կար-
գուած է, ժողովուրդէն ընտրուածը
լուծուած ըլլալով կանխաւ:

Ամեն անոնք որ կը զինուին այս
բացարձակ ճշմարտութեան դէմ,
կորսուած դատ մը պաշտպանելու
զուր ջանքը կ'ստանան, մոռնալով
որ երկու անգամ երկուքը ոչ նուազ
չորս կ'ընէ, եթէ աշխարհի բոլոր
թուագէտները միանան հակառակը
պնդելու համար:

Պատասխանելով ուրեմն մեր եր-
րորդ հարցումին կ'ըսենք՝

Հիմակուան թաղական խորհուրդն
1899ի ապրիլին ժողովուրդէն ընտ-
րուած խորհուրդը չէ՝, այլ տարբեր
մարմին մը, առժամանակեայ հան-
գամանքով:

(Շարունակելի)

ՇՈՒՄՈՒ ՏՈՂԵՐ

Սա չարածի տղաքները . . .
Կարապետ տղան ճաշի հրուիրուած է
. . . ենց տունը:

Սեղանին վրայ հիւրը խօսքը տանտիրուհ-
ւոյն ուղղելով՝

— Հաւատացէ՛ք, Տիկին, — կըսէ — կեան-
քիս մէջ աստիկ համով կերակուրներ կերած
չեմ:

— Մենք ալ կը պոռայ, ուրիշ տոգու մանջ
մը անդիմ:

Գուշար, յուստեա կենցաղաւոր մը սա
կերպով կը բացազանջի անպետ օր, կեան-
քի հրճուանքները եւ դաւանութիւնները:

— Վարդ չկայ որ փուշ եւ պտուղ չկայ
որ կուտ չունենայ, նոյն իսկ կուտով են
. . . արգիլեալ պտուղները:

Մեր բարեկամներէ մին, երէկ կեսօրացի
փաճառականի մը կը հանդիպի եւ կը հար-
ցնէ:

— Հաճի աղա, Փարոս տայ նէ՞ վար:

— Իրան ի՞նչ ետլան:

Ի՞նչ անգուլթ օրախօսութիւններ կան
երբեմն, Ատուած իմ:

Խենդ մտածումներ:

Ատուածութեան մէջ դասակ չունենալը,
քավութի մէջ կեալ նետելու կը նմանի:

ԱՍ-ՈՒ-ԱՆ

Մ Ո Ւ Չ Ո Ւ Ա Ն Լ Ա Յ Յ

ԱՊՍԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՆԻՒՆՈՐԻՒ ԱՄԵՐԻԿԱՆ ԿԵՆԱՅ ԱՊՍԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՍՏԱՏՅԱՆ 1843 ՊՆ

ՊԸՀԵՑԻ ԴՈՒՄԱՐ ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 563 ՄԻԼԻՈՆ 964 ՀՍԶԱՐ ՅՐԱՆԲ

Ապահովագրական ամեն կտեղի գրութիւնները կը գո ծաղիւն. խառն ապահովագրութիւն, ամբողջ կեանք, զաւակաց դրամագլուխ, ցմահ եկամուտ, եւայլն

ՄՈՒՉՈՒԱՆ ԼԱՅՅԻ սակագինը և ապահովագրութեան զանազան գրութիւնները չուսումնասիրած մի ապահովագրութիւն. — Աւատանձն ապամաններ, Տեղեկութեանց համար գիմել և Գահիրէ առ ՊՊ. Ն. ԳԻՐԶԻՍ և Ժ. ՎԱԼՖԻՇ, Ընդհ. ներկայացուցիչը, Աղեքսանդրիա Անթ. Թ. ՌԱԼԻ, գլխաւոր գործակալուար. Գ. ԵԿՍՈՒՅ ԴԵՐ-Գործակալ և Գահիրէ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵ

ԱՆԱՆՈՒՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
ԴՐԱՄԱԳԼՈՒԻ 200,000,000 ՅՐԱՆԲ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻ 8 ԵԳԻՊՏՈՍ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ-ԳԱԶԻՐԷ ԲՈՆ-ՍԱՅԻՏ

ԳՐԷՏԻ ԼԻՕՆԵՆ կ'ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ, ինչպէս փոխառութիւն արժէքաւոր թուղթերու վրայ:
Ընթացիկ հաշիւներ կը բանայ արժէքաւոր անգլիաներու վրայ:
Ֆրանսայի և օտար երկրներու վրայ կուտայ չէքեր, փոխանակագրեր, և վարկագրեր:
Կը գանձէ եղիպտոսի և արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր:
Աւանդ ձգուած գրամներուն փոխարէն կանխորոշ պայմանաժամով մուրհակներ կուտայ:

ԽՏԻՎԱԿԱՆ ՇՈԳԵՆԱԻԱՅԻՆ ԸՆԿ.

ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐԻՈՅ ԵՒ Կ. ՊՕԼՍՈՅ ՄԻՋԵԻ
ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ՇՈԳԵՆԱԻԵՐՈՎ

ՅՈՒՆԱՏԱՆԻ ԵՒ ԹՈՒՐԿԻՈՅ ԳԻԾ
ԵԱԲԱՔԱԿԱՆ ԵՐԹԵԻԵԿՈՒԹԻՒՆ
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շորեքշաբթի օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բերեա, Իզմիր, Միսիլի եւ Կ. Պօլս:
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Շաբաթ օր, առաւօտեան ժամը 7ին:
ԾԱՆՈԹ. — Ճամբորդները բաւական ժամանակ կ'ունենան շոգեաները Բի.

րէա հանդիպելուն, Աթէք այցելել:
ՍՈՒՐԻՈՅ ԳԻԾ.
ՄԵԿՆՈՒՄ. — Ամեն շաբաթ օր ժամը 4ին (յ. մ.) դէպի Բոն-Սայիտ, Եաֆա, Հայֆա, Պէյրութ, Տրիպոլիս, Մէրսին և Իսկէնտէրուն:
ԺԱՄԱՆՈՒՄ. — Միկնոյն նաւահանգիստ, ներքն ժամանում յԱղեքսանդրիա ամեն Չորեքշաբթի առաւօտեան ժամը 6ին, Տասնէինգ օրը անգամ մը՝ երթեկ կարմիր

Ծովու հետեւեալ նաւահանգիստներու միջև.
ՃԻՏՏԷ, ՍՈՒՄԲԻՆ, ՀՕՏԷՅՏԱ, ԱՏԷՆ
Ճամբորդութեանց և ապրանայ համար գիմել ընկերութեան Աղեքսանդրիոյ, Բոն-Սայիտի, Սիւէզի և Գահիրէի գործակալութեանց, ինչպէս նաեւ Քուքի ամեն մասնաճիւղերուն:
1-1902

ԼԵԻՈՆ ԿԻՒՄԻՇԵԱՆ

—X—
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԺԱՄԱՅՈՅՑԻ ԵՒ ԳՈՂԱՐԵՂԵՆԵՐՈՒ
ԳԱՀԻՐԷ, Մուսի փողոց,
Ս. եւ Ս. Սիսնաւիի վաճառատան դէմը
Ապրանայ զանազանութիւն
Երաշխաւորութիւն
Աժանութիւն
Ճոխ հաւաքածոյ Ամերիկեան և Ֆրանսական Փոստկրաֆներու
Ծախք: Վարպետ ժամագործ մը յաճախորդներու տրամադրութեան տակ կը գտնուի:
ԱՅՑԵԼԵՑԷՔ ԵՒ ԳՈՂ ՊԻՏԻ ՄՆԱՔ

ՊԱՆԱՐԱՆՈՒՄ ԵՒ ՇՊԵԿՈՒՄ
ԱՐՄԱՐ
ՄԵՏԱԼ
ԲԱՐԻՋ
1900
ԱՐԱՆՅ
ԳԻՆԵՐՈՒ
ԵՒ
ՏՂԵՑՈՇ ԱՄԱՐ
ՀԱՆԴԵՐՁՆԵՐ
ՍՍ ՎԵՐՅԻ ՆՐԱՊԵՐՈՒԹԵՒՆ
ՉՈՓԻՐ ԵՒ ՅՐԵՇԱՒ ԳԵՆԵՐ
ԱՂԵՔՍԱՆԴՐԻԱ — ԳԱՀԻՐԷ

ԵԳԻՊՏԱԿԱՆ ԱՋԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏՈՒՆ


Հաստատեալ խաիվական Հրամանագրով
25 Յունվար 1898

Դրամագլուխ Անգլ. ոսկի 1,500,000
Պահեստի դրամ " " 193,000
Կառավարիչ. Սըր Էլլին Բալմէր.

Ընկ. կեդրոն Ի Գահիրէ. Մասնաճիւղեր.
Աղեքսանդրիա, Մանսուրա, Խարթում:
Եղիպտական Ազգային Դրամատունը կընդունի աւանդներ, դրամ փոխ կուտայ և ընթացիկ հաշիւներ կը բանայ ապրանքի և արժէքաւոր թուղթերու վրայ:
Կը գնէ և կը վաճառէ արտասահմանի վրայ քաշուած փոխանակագրեր և կը ստանձնէ ամեն տեսակ սեղանաւորական գործողութիւններ.

Ս. ԴԱՐԲԻՆԵԱՆ ՏՊԱՐԱՆԻ ՄԷՋ

Կը տպուին ամեն լիզուէ հարսանե. կ'ան հրաւրագրեր, ճեղկագրեր, նաւակոյղ լուխ, Գրքեր, Տոմար, Հաշու-գրքեր, Մահազդեր, Յայտարարութիւններ, Խալիս, Խալիս, ԱժԱՆ ԳՆԵՐՈՎ



ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ ՓՈԽՐՈՎ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻՆ
50 % ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԵԼՈՎ

ԼՈՒՍԱՆԿԱՐՁԱՏՈՒՆ ՍԷՏԷՖՃԵԱՆ

ՀԻՄՆԵԱԼ Ի Կ. ՊՕԼԻՍ 1882 թ
ՓՈԽՐԵՄԱ Ի ԳԱՀԻՐԷ 1898 թ

ԱԹԱՊԱ - ԷԼ - ԽԱՏՐԱ — ՊԱՋԱՐ-ՍՈՒՐՈՒՐ

Այս ծանօթ լուսանկարչատան մէջ շատ խնամեալ և վերջին դրութեամբ կը պատրաստուին ամեն մեծութեամբ և ամեն տեսակ լուսանկարներ. կոռպներ և ակրաւն-սխարմաններ:
Դուրսը առնուելիք լուսանկարներու համար դերա-մատչելի պայմաններ:

ԱՇԽԱՏՈՒԹԵԱՆ ՄԱԲՐՈՒԹԻՒՆ
ԱՐՈՒԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՇԱԿ
ԴԻՆԵՐՈՒ ՉՈՓԱՌՈՐՈՒԹԻՒՆ

ՔԻՆՏԸԼ ԵՒ ՍԻՄՕՆՍ

Հաստատեալ յամին 1860

ԱՅԱԳՈՐԾԷ-ՀԱՅԹԱՅԹԻՉԷ Ն. Բ. ԽՏԻՎԻՆ

Այս նշանաւոր փուռին մէջ կը պատրաստուին ամեն տեսակ հացեր, պիսքիւներ, և շէյրեր:

Այս փուռին մասնաւոր կառքեր կը շրջապային Գահիրէի ամեն թաղերու մէջ, ինչպէս նաեւ Զէյթուն և Ի Հէյվան:

Թէվիզիլէ, Պուլաբի ճամբայ. ԳԱՀԻՐԷ
Թէլէֆօն թիւ 504.